

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**<ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՈՂԿԱԾ 1. <Օրգանական գյուղատնտեսության մասին> Հայաստանի Հանրապետության 2008 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-23-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի <կարգը> բառից հետո լրացնել <և ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևը> բառերը:

ՈՂԿԱԾ 2. Օրենքի 9-րդ հոդվածի.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<1. Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի մակնշման մեջ, ինչպես նաև գովազդում նշվում է <օրգանական> կամ մակնշման առումով համարժեք <էկոլոգիական>, <էկոլոգիապես մաքուր>, <բիոլոգիական> տերմինները կամ դրանց <էկո>, <բիո> կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, միայն այն դեպքում, եթե>:

2. 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 1.1-րդ մասով.

<1.1 Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի արտադրություն և(կամ) շրջանառություն իրականացնող և(կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և(կամ) շրջանառվող սննդամթերքի և(կամ) սննդամթերքի մատուցման ծառայությունների անհատականացման միջոցներում արգելվում է օգտագործել <օրգանական>, <էկոլոգիական>, <բիոլոգիական> բառերը կամ դրանց <էկո>, <բիո> կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, բացառությամբ զուտ օրգանական գյուղատնտեսական արտադրանք արտադրող և(կամ) շրջանառող և(կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և(կամ) շրջանառվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և(կամ) օրգանական գյուղատնտեսական արտադրանքի ծառայությունների մատուցման անհատականացման միջոցների>:

ՈՂԿԱԾ 3. Օրենքի 10-րդ հոդվածի.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<1. Ներմուծվող օրգանական գյուղատնտեսական>

1) արտադրանքը պետք է ուղեկցվի արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված սերտիֆիկատով և պարունակի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևով սահմանված ամբողջ տեղեկատվությունը.

2) սննդամթերքը, դեղաբույսերը, տեխնիկական, կերային և ուտելի բույսերը պետք է մակնշված և պիտակավորված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, միջպետական համաձայնագրերին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային կամ միջպետական ընդունված պահանջներին և նորմերին համապատասխան.

3) ներմուծողը (մատակարարը) օրգանական սերտիֆիկատի բնօրինակը պետք է պահպանի առնվազն 2 տարի>:

2. 2-րդ մասի <Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության> բառերը փոխարինել <Բուսասանիտարիայի> բառով:

ՈՂԿԱԾ 4. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը տարածվում է՝ օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված անհատականացման միջոցների վրա, 2014 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ
<<Օրգանական գյուղատնտեսության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության և առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
1. ՀՀ կառավարություն	1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող ներմուծման և արտահանման կարգի մշակման պահանջը ոչ թե փոխարինել, այլ լրացնել ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևը սահմանելու մասին պահանջով: 2. Սպառողներին թյուրիմացության մեջ չգցելու և ներկայումս լայն կիրառում ունեցող <էկո>, <բիո> կամ այլ կրճատ ձևերը ապրանքային նշաններում կամ ֆիրմային անվանումներում օգտագործումը կանոնակարգելու նպատակով՝ նախագծի 2-րդ հոդվածը լրացնել նոր մասով, իսկ օրենքի նախագիծն ընդունվելու պահին գրանցված ապրանքային նշանները կամ ֆիրմային անվանումները նոր սահմանվող պահանջին համապատասխանեցնելու համար սահմանել անցումային ժամանակահատված:	1. Ընդունվել է: ՀՀ կառավարության 21.10.2010թ. N 1442-Ն որոշմամբ սահմանված սննդամթերքի ներմուծման և արտահանման կարգը օրենքի նախագծի ընդունումից հետո ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ կտարածվի նաև օրգանական գյուղատնտեսական սննդամթերքի վրա: 2. Ընդունվել է:	1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. <Օրգանական գյուղատնտեսության մասին> Հայաստանի Հանրապետության 2008 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-23-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի <կարգը> բառից հետո լրացնել <և ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևը> բառերը:>: 2. Նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ <2. 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 1.1-րդ մասով. <<1.1 Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի արտադրություն և(կամ) շրջանառություն իրականացնող և(կամ) ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների, թողարկվող և(կամ) շրջանառվող սննդամթերքի և(կամ) սննդամթերքի մատուցման ծառայությունների անհատականացման միջոցներում արգելվում է օգտագործել <օրգանական>, <էկոլոգիա-կան>, <բիոլոգիական> բառերը կամ դրանց <էկո>, <բիո> կամ կրճատ այլ ձևերը՝ առանձին կամ հարադիր, բացառությամբ զուտ օրգանական գյուղատնտեսական արտադրանք արտա-դրող և(կամ) շրջանառող և(կամ) ծառայություններ մատուցող տնտեսա-վարող սուբյեկտների, թողարկվող և(կամ) շրջանառվող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և(կամ) օրգանական գյուղատնտեսական արտա-դրանքի ծառայությունների մատուցման անհատականացման միջոցների:>:

	3. Հաշվի առնելով, որ օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող սերտիֆիկատը տրամադրող մարմինները տարբեր երկրներում տարբեր են և, որ օրգանական գյուղատնտեսական արտադրանքն ուղեկցող միջազգայնորեն ընդունված սերտիֆիկատները կարող են պարունակել ՀՀ կառավարության կողմից հաստատված ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևով նախատեսվող ամբողջ տեղեկատվությունը, առաջարկվում է օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <1> արտադրանքը պետք է ուղեկցվի արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված սերտիֆիկատով և պարունակի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևով նախատեսված ամբողջ տեղեկատվությունը.>: 4. Հաշվի առնելով ստանդարտների կիրառման կամավորության սկզբունքը՝ 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի	3. Ընդունվել է:	4-րդ հոդվածը լրացվել է 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝<2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված անհատականացման միջոցների վրա՝ 2014 թվականի հունվարի 1-ից:>: 3. Օրենքի նախագծում 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <1> արտադրանքը պետք է ուղեկցվի արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված սերտիֆիկատով և պարունակի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ներմուծվող օրգանական գյուղատնտեսական սննդամթերքն ուղեկցող օրգանական սերտիֆիկատի ձևով նախատեսված ամբողջ տեղեկատվությունը.>: 4. 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <ստանդարտներին> բառը փոխարինվել է <ընդունված պահանջներին> բառերով:
--	---	------------------------	---

	<ստանդարտներին> բառը փոխարինել <ընդունված պահանջներին> բառերով: 5. Տնտեսավարող սուբյեկտների համար նոր պահանջներ չսահմանելու համար՝ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը հանել:	4. Ընդունվել է: 5. Ընդունվել է: Քանի որ ՀՀ կառավարության 21.10.2010թ. N 1442-Ն որոշմամբ սահմանված կարգով ներմուծվող սննդամթերքը զննվում է ՀՀ ՉՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սահմանային հսկիչ կետում, նշված որոշման համապատասխան փոփոխությամբ օրգանական սերտիֆիկատի կրկնօրինակը լիազոր մարմին հանձնելու պարտավորությունը կդրվի սահմանային հսկիչ կետի տեսուչի վրա:	5. Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը հանվել է:
	6.Օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «մասի 1-ին պարբերությունը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «մասը» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:	6.Ընդունվել է:	6. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «մասի 1-ին պարբերությունը» բառերը փոխարինվել է «մասը» բառով: